Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

24457

# Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՀԵՌԱԿԱ ՊՐՈՖ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

331.88
П. 63

ԵՐԵՎԱՆ 1932

24457
331.88
Ի-63
26 APR 2013

Պետհրատի տպարան
Գլավլիտ 7008 (բ)
Պատվեր 6458
Տիրաժ 500

8252-53
15 JAN 2010

# ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՀԵՌԱԿԱ ՊՐՈՖՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀամԿ (բ) Կ 16-րդ համագումարն ընդգծեց, որ «պրոֆմիութենական նոր ղեկավար կադրեր առաջ քաշելու և պատրաստելու խնդիրը հանդիսանում է համակուսակցական կարևորագույն մի խնդիր, որը վճռական նշանակություն ունի պրոֆմիությունների վերակառուցման համար»:

Պրոֆկադրերի պատրաստման ու վերապատրաստման պրոբլեմը ներկայումս դրվում է առանձին սրությամբ: ՀԱՄԿԽ-ի 5-րդ պլենումի որոշումների հիման վրա միությունների վերակազմությունը կհանգի այն բանին, որ «պրոֆաշխատանքի ծանրության կենտրոնն իրոք կփոխադրվի ձեռնարկությունը, գործարանը, խորհնտնտեսությունը, ցեխը և հատկապես սկզբնական արտադրական խումբը»: Միությունների փոքրացումը լուրջ պահանջներ է առաջադրում պրոֆաշխատողին և պահանջում է ուժեղացնել պրոֆկադրերի պատրաստության գործը:

Ելնելով այն բանից, որ «պրոֆկադրերի պատրաստությունը ներկայումս առանձնապես կարևոր նշանակություն է ստանում», ՀԱՄԿԽ-ի 5-րդ պլենումը առաջարկեց ընդարձակել պրոֆդասընթացները և դպրոցների ցանցը:

Բայց պրոֆշարժման սովորական դպրոցներն ու դասընթացները չեն կարող ամբողջապես լուծել պրոֆկադրերի պատրաստման պրոբլեմը: Պրոֆաշխատողներ պատրաստելու համար կարելի է և պետք է լայնորեն օգտագործել հեռակա ուսուցումը: Համաձայն ՀԱՄԿԽ-ի քարտուղարության որոշման, պրոֆկադրերի հեռակա պատրաստման գործը կենտրոնացված է պրոֆշարժման բարձրագույն դպրոցում, որտեղ այդ գործի ղեկավարման համար ստեղծված է հեռակա ուսուցման սեկտոր:

## ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍԵԿՏՈՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սեկտորը հեռակա ուսուցման ճանապարհով պատրաստում է պրոֆշարժման կադրեր, այդպիսին վերցնելով ստորին ակտիվ պրոֆաշխատողներից ու առաջավոր հարվածային բանվորներից, ինչպես նաև բարձրացնում է պրոֆկազմակերպությունների միջին ու բարձրագույն օղակների աշխատողների վորակավորումը։

Հեռակա ուսուցման հիմքում պրոֆշարժման բարձրագույն դպրոցի հեռակա սեկտորը դնում է Մարքս-լենինյան թեորիայի յուրացումը պրոֆակտիվի կողմից, այդպիսին սերտորեն շաղկապելով սոցիալիստական շինարարության հետ՝ թեքումների դեմ անհաշտ պայքար մղելու հիմունքով։

Հեռակա ուսուցման սեկտորն իրեն խնդիր է առաջադրում օգնել պրոֆակտիվին, վորպեսզի նա սովորի տարբերել, մերկացնել ու մեջտեղից վերացնել թեքումները պրոֆշարժման թեորիայում յեվ պրակտիկայում, հատկապես աջ թեքման նկատմամբ, վորն ամենից ավելի վտանգավոր թեքումն է սոցիալիզմի կառուցման ներկա պայմաններում։

Հեռակա ուսուցման սեկտորն իրեն նպատակ է դնում պրոֆակտիվին զինել պրոֆշարժման նոր խնդիրները ըմբռնելու ընդունակությամբ, խնդիրներ վոր դրվում են սոցիալիստական հաջող շինարարության և արտաքին ու ներքին դասակարգային թշնամիների դիմադրության սրման այսօրվա պայմաններում, պրոֆակտիվին զինել արտադրության կոնկրետ ղեկավարության համար անհրաժեշտ տեխնիկական գիտելիքներով և ապահովել պրոֆապարատի վերակառուցումը տվյալ շրջանի խնդիրներին համապատասխան, հեշտացնել պրոֆմիությունների իսկական շըրջադարձը յերեսով դեպի արտադրությունը։

## ԻՆՉՊԵ՞Ս Է ՏԱՐՎՈՒՄ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Կուրսանտներին մշակման համար ուղարկվում են տպագրված դասեր, վորոնք մշակված են հատկապես հեռակայինների համար։ Այս դասերը տեքստից բացի պարունակում են նաև մշակման պլանը, մեթոդական ցուցմունքներ, ինքնաստուգողական հարցեր, գործնական առաջադրություններ և կոնտրոլ հարցեր։

Կոնտրոլ հարցերի գրավոր պատասխանները կուրսանտներն



ուղարկում են հեռակա ուսուցման սեկտորին։ Այստեղ այդ պատասխաններն ստուգվում են վորակյալ դասատուների միջոցով, վորոնք և կուրսանտներին ուղարկում են իրենց գրավոր կարծիքը (ռեցենզիան), մատնանշում են սխալները և այլն։

Հեռակա ուսուցումը կենդանի, անմիջական կապի ձևերի հետ շաղկապելու և ուսուցման ղեկավարությունն ունկնդիրներին մոտեցնելու համար տեղական խոշոր կենտրոններում կազմակերպվում են հեռակա ուսուցման մասնաճյուղեր, կենտրոնում և տեղերում կազմակերպվում են հեռակայինների կազմակերպչական-ուսումնական կոնֆերանսներ, մասնակից են դարձվում տեղական պրոֆկոնսուլտացիաները, պրոֆշարժման տեղական դպրոցների ու դասընթացների դասատուներն ու ապարատը և այլն։

Հեռակա ուսուցման սեկտորի ղեկավարությունն ունկնդիրների պարապմունքների նկատմամբ արտահայտվում է նաև այն բանով, վոր կուրսանտներին՝ ա) տրվում են սիստեմատիկ կազմակերպչական մեթոդական ցուցմունքներ պարապմունքները վարելու մասին, բ) ուղարկվում են հատուկ նամակներ, վորտեղ ցուցմունքներ են տրվում հեռակայինների գործնական աշխատանքի մասին, գ) բաժանորդագրության կարգով ուղարկվում է (ակտիվ ունկնդիրներին) հատուկ բյուլլետեն, վորտեղ հոդվածներ են տրվում առանձին տեսական հարցերի, կուսակցության ընթացիկ քաղաքականության հարցերի և այլ խնդիրների մասին, ինչպես նաև ցուցմունքներ գրքերից օգտվելու մասին, կոնսուլտացիոն նյութեր և այլն։

## ՎՈՐ ՑԻԿԼԻՆ ԿԱՐԵԼԻ Է ՀԵՏԵՎԵԼ

### 1. Պրոֆշարժման բարձրագույն դպրոցի նախապատրաստական ցիկլ

Պրոֆշարժման բարձրագույն դպրոցը մտնել կամեցողների նախապատրաստման համար բացված է հատուկ ցիկլ, վորտեղ ուսուցումը տևելու յե մեկ տարի։

Ցիկլի ուսումնական պլանը կազմված է համաձայն պրոֆշարժման բարձրագույն դպրոցի նախապատրաստական բաժնի ծրագրի։ Ուսման ժամկետը 1 տարի յե։

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՍԽԵՄԱՆ

| Առարկաներ | Առաջադրանքների թիվը | Յուրաքանչյուր առաջադրության էջերի մոտավոր թիվը | Ժամերի նորման: Առաջադրանքի մշակման համար | Ժամերի նորման: Գրքի վրա աշխատելու համար | Ժամերի նորման: Գործնական պարապմունքներ |
|---|---|---|---|---|---|
| Ռուսաց լեզու և գրքի վրա աշխատելու ունակություններ . . . . | 12 | 8 | 24 | 48 | — |
| Մաթեմատիկա . . . | 12 | 8 | 24 | 48 | — |
| Ֆիզիկ.-աշխարհագրություն | 8 | 8 | 32 | 48 | — |
| Ընդհ. քաղաք. թեմաներ | 12 | 16 | 48 | 48 | 24 |
| | 44 | — | 123 | 192 | 24 |

### 2. Բանվոր պրոպագանդիստների ցիկլ

Այս ցիկլը նախատեսված է այն բանվորների համար, որոնք պրոպագանդիստական աշխատանքի վարող փորձ ունեն (զրուցավարներ, ղեկավարներ և այլն)։ Ցիկլի նպատակն է պատրաստել ու վերապատրաստել քաղպր գործունների ու թեմատիկական խմբակների ղեկավարներ և զրուցավարներ։

Ուսման ժամկետը 1 տարի է։

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՍԽԵՄԱՆ

| Առարկաներ | Առաջադրանքների թիվը | Յուրաքանչյուր առաջադրության էջերի մոտավոր թիվը | Ժամերի նորման: Առաջադրանքի մշակման համար | Ժամերի նորման: Գրքի վրա աշխատելու համար | Ժամերի նորման: Գործնական պարապմունքներ |
|---|---|---|---|---|---|
| Ուսանողների պրոֆշարժման պատմություն (ուսակցության պատմության հիման վրա) . . . . | 12 | 16 | 48 | 48 | — |
| Միջազգային պրոֆշարժում . . . . | 8 | 16 | 32 | 32 | — |
| Լենինիզմ . . . . | 4 | 16 | 16 | 16 | — |
| Քաղ. տնտեսություն | 6 | 16 | 36 | 24 | — |
| Ընդհանուր քաղաքական թեմաներ . . . . | 12 | 16 | 48 | 48 | — |
| Պրոֆ. ուսավորության կազմակերպում և մեթոդիկա . . | 10 | 16 | 40 | 40 | 36 |
| Գրքի, աշխարհագրական քարտեզի և թվական նյութերի վրա աշխատելու ունակություններ . . . | 12 | 8 | 24 | 48 | — |
| | 64 | — | 244 | 256 | 36 |



### 3. ՊՐՈՖԱԿՏԻՎԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ – ՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՑԻԿԼ

Այս ցիկլից հեռակայինն ընտրում է դիսցիպլիններից մեկն ու մեկը և նրա վրա աշխատում է մոտ 1 տարի (10 ուսումնական առաջադրություն և 1 լեզրափակման կոնֆերանս)։ Յուրաքանչյուր թեմայի համար ունկնդիրը տալիս է ընդարձակ գրավոր աշխատանք՝ լուսաբանելով սեկտորի առաջադրության 1—2 հանգուցային հարցերը։

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՍԽԵՄԱ

| Դիսցիպլին | Առաջադրությունների թիվը | Առաջադրության էջերի թիվը | 1 առաջադրության մշակման մոտավոր ժամանակը |
|---|---|---|---|
| Ուսանողների պրոֆշարժման պատմություն . . . | 10 | 32 | 1 ամիս |
| Միջազգային բանվորական շարժման պատմություն . | 10 | 32 | 1 ամիս |
| Խորհրդային տնտեսության տեսություն . . . | 10 | 32 | 1 ամիս |

### 4. ՊՐՈՖՇԱՐԺՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ, ՅԵՐԿՐԱՅԻՆ ՅԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՑԻԿԼ

Ուսումնական պլանը կազմվում է հաշվի առնելով այն պահանջները, որոնք առաջադրվում են պրոֆշարժման հանրապետական, երկրային և մարզային դպրոցները մտնել կամեցողներին։ Ուսման ժամկետը 10 ամիս է։

Հեռակա ուսուցումից ստացիոնար դպրոցը փոխադրվելը (առանց ընդունելության քննությունների) կատարվելու է 1932 թ. աշնան հավաքի ժամանակ, լեզրափակման կոնֆերանսներից հետո։

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՍԽԵՄԱ

| Առարկաներ | Առաջադրանքների թիվը | Յուրաքանչյուր առաջադրության էջերի մոտավոր թիվը | Ժամերի նորման: Առաջադրության մշակման համար | Ժամերի նորման: Գրքի վրա աշխատելու համար | Ժամերի նորման: Գործնական պարապմունքներ |
|---|---|---|---|---|---|
| Ռուսաց լեզու և գրքի վրա աշխատելու ունակություններ . . . . . . | 12 | 8 | 24 | 48 | — |
| Մաթեմատիկա . . . . . | 12 | 8 | 24 | 48 | — |
| Ֆիզ. աշխարհագրություն | 8 | 8 | 32 | 48 | — |
| Ընդհանուր քաղ. թեմաներ | 12 | 16 | 48 | 48 | 24 |
| | 44 | — | 128 | 192 | 24 |

## 5. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՑԻԿԼ

Այս ցիկլի նպատակն է—պատրաստել շրջանային և արտադրական ակտիվ պրոֆաշխատանքի առանձին տեսակների համար։

Ուսումնական պլանն ընդգրկում է թե հանրակրթական առարկաներ և թե «Քաղաքատնտեսության հիմունքներ» կուրսը։ Մտցված են նաև տեխնիկական թեքումներ ըստ արդյունաբերության ճյուղերի։

Տեխնիկական թեքումների նպատակադրումն է,—պրոֆակտիվին զինել տեխնիկական այնպիսի գիտելիքներով, վորոնք անհրաժեշտ են նրան տվյալ արտադրության ցավոտ հարցերը գործնականորեն լուծելու համար։

«Պրոֆաշխատանքի պրակտիկա» բաժնում շեշտը դրվում է ստորին ողակների պրոֆաշխատանքի ուսումնասիրության վրա և ապահովվում է պրոֆաշխատանքի առանձին տեսակների համար կազմակերպիչներ պատրաստելու ու վերապատրաստելու խնդիրը։

Այս ցիկլում ուսման ժամկետը 1 տարի յե։

Ուսումնական պլանի սխեմա

| Առարկաներ | Առաջադրությունների թիվը | Յուրաքանչյուր առաջադրության եջերի մոտավոր թիվը | Ժամերի նորման: Առաջադրությունների մշակման համար | Ժամերի նորման: [illegible] |
|---|---|---|---|---|
| Քաղաքատնտեսության հիմունքներ | 7 | 24 | 42 | 28 |
| Տեխ. մինիմում (7 արտադրական խմբեր 1) | 5 2) | 24 | 50 | — |
| Ռուսաց լեզու | 10 | 8 | 20 | 20 |
| Մաթեմատիկա | 10 | 8 | 20 | 20 |
| Պրոֆաշխատանքի պրակտիկա (7 յենթացիկլ) | 8-11 | 16 | 16-22 | 32-44 |

1) 1 Սև մետալուրգիայի, 2, յերկաթուղային տրանսպորտի, 3. շինարարական խումբ. 4. նավթի 5, մեքենաշինության, 6, լեռնա-հանքային, 7. տեքստիլ։

2. Յուրաքանչյուր խմբի համար։



Պրոֆաշխատանքի պրակտիկայի շուրջը տրվում է 3 ընդհանուր առաջադրություն, մնացածները՝ համաձայն ընտրած թեքման, այն է՝ արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչների համար՝ 7 առաջադրություն, տարիֆ-նորմավորման աշխատանքին՝ 6, կուլտուր-քաղաքական՝ 8, սոցիալ-կենցաղային՝ 5, խմբական կազմակերպիչների համար, 6, կադրերի կազմակերպիչների համար՝ 7 և գյուղաշխատանքի կազմակերպիչների համար՝ 6 առաջադրություն։

Բացի այդ, մի քանի առաջադրություն է տրվելու վոչ-արտադրական միությունների համար։

Պրոֆաշխատանքի պրակտիկայի յուրաքանչյուր առաջադրություն տրվում է մոտ 24 եջ, 4 ժամվա ընթացքում մշակելու համար (գրավոր աշխատանքին ևս 4 ժամ)։

Յուրաքանչյուր հեռակայի՛ն միջին հաշվով ուսմանը հատկացնելու յե հանձնարարվում 10 ժամ։

## 6. Խորհտնտեսությունների յեվ ՄՏԿ-ների պրոֆակտիվի պատրաստություն

Ցիկլը բաժանվում է յերկու յենթացիկլների—ա) խորհտնտեսությունների պրոֆակտիվի համար, բ) ՄՏԿ-ների պրոֆակտիվի համար։ Մի շարք թեմաներ ընդհանուր են յերկու յենթացիկլների համար։ Բացի այդ, տրվում են հատուկ թեմաներ (թեքումներ) ըստ ա) անասնապահական և բ) հողագործական ճյուղերի իսկ պրոֆաշխատանքի պրակտիկայից—1) աշխատանքի, արտադրության և աշխատավարձի հարցերի, 2) սոցկենցաղային աշխատանքի և 3) կուլտուրքաղաշխատանքի հարցերի վերաբերյալ։

Ուսումնական պլանի սխեմա

*Ընդհանուր առարկաներ*

| Առարկաներ | Առաջադրությունների թիվը | Յուրաքանչյուր առաջադրության եջերի թիվը | Առաջադրությունների մշակման ժամերի թիվը | [illegible] |
|---|---|---|---|---|
| Ընդհանուր քաղ. հարցեր | 5 | 16 | 20 | 20 |
| Ռուսաց լեզու (ներառյալ նաև գրքի վրա աշխատելու ունակությունները) | 12 | 8 | 24 | 48 |
| Մաթեմատիկա և հաշվետարության տարրեր | 10 | 8 | 40 | 40 |

Հատուկ կուրսեր

| | | | | |
|---|---|---|---|---|
| Խորհտնտշինարարություն | 9 | 16 | 36 | 36 |
| ՄՏԿ-ների խնդիրները և կոլտնտշինարարություն | 8 | 16 | 32 | 32 |

Այս թեմաներն ուղարկվում են ըստ այն յենթացիկլի, վորին հետևում ե հեռակայինը։ Այս թեմաներից ուղարկվում են միքանի հատուկ թեմաներ՝ ըստ խորհրդատվության տիպի։

**Պրոֆաշխատանքի պրակտիկա**

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աշխատանք, արտադրություն և աշխատավարձ . . . . . . . . . . | 5 | 16 | 20 | 20 |
| Սոցկենցաղային աշխատանք . . . . | 5 | 16 | 20 | 20 |
| Կուլտուր-քաղաքական աշխատանք . | 5 | 16 | 20 | 20 |

Այս առաջադրությունները հանդիսանում են այս ցիկլի կուրսերի շարունակությունը և ուղարկվում են հեռակայինի ընտրության համաձայն։

## Ի՞ՆՉ ՇՐՋԱՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ

Հեռակա ուսուցման սեկտորը պատրաստում ե՝ ա) հանրապետական, երկրային, մարզային ու շրջանային միջմիութենական և միութենական կազմակերպությունների աշխատողներ, գործարանկոմների անդամներ և հարվածայիններ, բ) արտադրության զանազան ճյուղերի պրոֆաշխատողներ և գ) բանվոր պրոֆպրոպագանդիստներ։

## ԻՆՉՊԻՍԻ՞ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍԵԿՏՈՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ամենից ավելի ակտիվ ստորին պրոֆաշխատողներն ու առաջավոր բանվոր—հարվածայիններն ընդունվում են հեռակա ուսուցման սեկտորի բոլոր ողակները։

Բոլոր ցիկլերն ընդունվողները պետք ե իմանան կարդալ, գրել, ազատ շարադրել իրենց մտքերը և ունենան այնքան ընդհանուր պատրաստություն, վորով ապահովվի նրանց հաջող աշխատանքը տվյալ ցիկլում։

2. ՀԱՄԿԽ-ի պրոֆշարժման բարձրագույն դպրոցի և միությունների ԿԿ-ների կենտրոնական պրոֆդպրոցների նախապատրաստական ցիկլը կարող են ընդունվել—պրոֆակտիվի բանվոր—հարվածայինները, պրոֆմիութենական ապարատների գըլխավորապես բանվոր աշխատողները, վորոնք ունեն առնվազն 5 տարվա արտադրական ստաժ, 4 տարվա պրոֆ ստաժ և 2 տարվա հասարակական պրոֆեսիոնալ աշխատանքի ստաժ, առնվազն գործարկոմի կամ խոշոր ցեխկոմի աշխատանքի մասշտաբով 22-ից մինչև 34 տարեկան, հանրակրթական պատրաստությունը I-ին աստիճանի դպրոցի ծավալով, իսկ քաղպատրաստությունը մարզային պրոֆդպրոցի կամ խորհրդային—կուսակցական դպրոցի ծավալով։

Ազգային հանրապետություններից և ազգային փոքրամասնություններից գործուղվողներից պահանջվում ե՝ առնվազն 3 տարվա արտադրական ստաժ, 2 տարվա՝ պրոֆստաժ, 1 տարվա՝ հասարակական աշխատանքի ստաժ, ռուսերեն գրել և կարդալ, թվաբանական չորս գործողությունները և քաղպատրաստություն քաղդպրոցի ծավալով։

Քանի վոր այս ցիկլի յուրաքանչյուր հեռակայի հատուկ հաշվառման ե յենթարկվում և ՀԱՄԿԽ-ի քարտուղարության կողմից 1932 թ. սեպտեմբերին կանչվելու յե պրոֆշարժման բարձրագույն դպրոցը փոխադրվելու համար, ապա այս ցիկլի հավաքագրում կատարելիս պետք ե հաշվի առնել այն հանգամանքը, վոր տվյալ հեռակայինը աշխատանքից հանվելու յե ուսման գնալու համար։

3. Բանվոր պրոպագանդիստների պատրաստման ցիկլը գործուղվողները պետք ե ունենան առնվազն 5 տարվա արտադրական ստաժ և քաղպատրաստություն՝ մոտավորապես ռեյոնային խորհրդային—կուսակցական դպրոցի ծավալով։ Բացի այդ՝ նրանք պետք ե ունենան պրոպագանդիստական աշխատանքի ունակություններ (զրուցավարներ, պրոֆդպրոցների և խմբակների ղեկավարներ, կուսուսուցման պրոպագանդիստներ, վորոնք ցանկանում են վորակավորվել պրոֆշարժման թեորիայի ու պրակտիկայի հարցերի շուրջը)։

4. Առարկայական-տեսական պատրաստման ցիկլը գործուղվում են ղեկավար պրոֆաշխատողները, վորոնք ունեն առնվազն մարզային պրոֆդպրոցի ծավալով պատրաստականություն և գրքի վրա ինքնուրույն աշխատանք կատարելու ունակություններ։ Այս ցիկլը մտնողներից պահանջվում ե առնվազն 5 տարվա արտադրական ստաժ, առնվազն 3 տարվա ղեկավար հասա-

բանվորական ու պրոֆեսիոնալ աշխատանքի ստաժ և առնվազն 5 տարվա կուսստաժ։

Այս պահանջների պահպանումն անհրաժեշտ է, վորովհետև ամենից ավելի առաջավոր ընկերները կուրսն ավարտելուց հետո ՀԱՄԿԽ և պրոֆկազմերի սեկտորի կողմից հաշվի չեն առնվելու, վորպեսզի առաջքաշվեն—ա) պրոֆշարժման բարձրագույն դպրոցի ասպիրանտուրան, բ) կոմակադեմիայի պրոլետարիատի պատմության ինստիտուտի պրոֆսեկցիան և այլն։

5. Հանրապետական, յերկրային և մարզային պրոֆդպրոցների նախապատրաստական ցիկլի ընդունվողները պետք է ունենան առնվազն 3 տարվա արտադրական ստաժ, առնվազն 1 տարվա պրոֆմիութենական և հասարակական աշխատանքի ստաժ, գրել և կարդալ, թվաբանական չորս գործողությունները։

6. Մնացած ցիկլերն ընդունվում են շրջանային և սարքին պրոֆկազմակերպությունների պրոֆակտիվիստներն՝ իրենց ընդհանուր քաղաքական մակարդակը բարձրացնելու և պրոֆաշխատանքի զանազան ճյուղերում աշխատանքի նախապատրաստվելու համար։

## ԻՆՉՊԻՍԻ՞Ն Է ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍԵԿՏՈՐՆ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՅԵՎ ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՆ ԳՈՐԾՈՒՂՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հեռակա ուսուցման սեկտորը կարելի է ընդունվել գործարկոմների գործուղումներով։ Հեռակա ուսուցման սեկտորի տեղերը գործարկոմների վրա բաժանում են միությունների կենտկոմներն ըստ առանձին մասնատրման։ Այս մասնատրման մեջ ընկնելու համար անհրաժեշտ է դիմել սեփական միութենական կազմակերպությանը։

Պրոֆխորհուրդները հեռակա ուսուցման սեկտորը կարող են գործուղել միջմիութենական կազմակերպությունների աշխատողներին՝ մասնատրումից դուրս, վորի մասին պետք է վերապահություն արված լինի գործուղումների մեջ։

Գործուղող կազմակերպությունները պետք է հաշվի առնեն 1930 թ. կոմպլեկտավորման աշխատանքի թերությունները, յերբ հեռակա պատրաստման եկին ուղարկված կիսագրագետ պրոֆանդամները, և խուսափեն նրանցից։

Տեղական պրոֆկազմակերպությունները պետք է լայն բացատրական աշխատանք ծավալեն կոմպլեկտավորման շուրջը



կոմպլեկտավորումը վոչ մի դեպքում չպետք է ընթանա ինքնահոսի կարգով։ Գործուղվողների թեկնածությունները պետք է լիովին համապատասխանեն ընդունելության պայմաններին և ապահովեն նրանց ակտիվ մասնակցությունը սեկտորի աշխատանքներում։

Հեռակա ուսուցման սեկտորին ունկնդիրներ ուղարկող բոլոր կազմակերպությունները պետք է նկատի ունենան, վոր միմիայն կոմպլեկտավորումով չի վերջանալու նրանց աշխատանքը հեռակայիններին սպասարկելու գործում։ Նրանք ամենասերտ կապ պետք է հաստատեն հեռակա ուսուցման սեկտորի և ունկնդիրների հետ, շարունակ վերահսկող լինեն հեռակայինների ուսումնական աշխատանքին, նրանց ընկերական օգնություն ցույց տան ուսման նորմալ պայմանները ստեղծելու գործում, համաձայն ՀամԿ(բ)ԿԿ-ի և ՀԱՄԿԽ-ի վորոշման՝ նրանց ազատեն ծայրահեղ բեռնավորումից, կոնտրոլ սահմանեն ունկնդիրների աշխատանքի վրա, հասարակական ներգործության միջոցներ ձեռք առնեն բոլոր նրանց նկատմամբ, վորոնք չեն արդարացնում նրանց վրա դրված հույսը և կոնտրոլ հարցերին պատասխաններ չուղարկելով՝ վիժեցնում են ուսուցման գործը։

## ԻՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

ՀԱՄԿԽ-ի պրոֆշարժման բարձրագույն դպրոցը և միությունների կենտկոմների կենտրոնական պրոֆդպրոցները գործուղվողները հեռակա ուսուցման սեկտորին ներկայացնում են.

ա) Գործուղման վկայական և անհատական բնութագիր գործուղող կազմակերպության կողմից (կուսակցության անդամները ու թեկնածուները ներկայացնում են նաև կուսբնութագիր)

բ) լրացված և կուսկազմակերպության (կուսանդամների համար) ու պրոֆկազմակերպության (անկուսակցականների համար) կողմից հաստատված հարցաթերթիկ։ Հարցաթերթիկում առանձնապես կարևոր է տեղեկություններ տալ բանվորական ստաժի և ղեկավար պրոֆաշխատանքի ստաժի մասին,

գ) զինվորական հաշվառման տոմսի պատճենը։ Զինվորական ծառայության յենթակա յեղող անձինք Բարձրագույն դպրոցը հեռակա պատրաստման ցիկլը չեն ընդունվում.

դ) տեղեկանք առողջական դրության մասին։

Մարզային ու յերկրային դպրոցների նախապատրաստական ցիկլը և բանվոր պրոֆպրոպագանդիստների պատրաստման ցիկլը

գործուղվողները ներկայացնում են գործուղման վկայական, կուսակցական ու պրոֆմիութենական կազմակերպության տված բնութագիրը և պրոֆկազմակերպության կողմից հաստատված հարցաթերթիկ։

Մնացած ցիկլերն ընդունվողները ներկայացնում են պրոֆկազմակերպության կողմից հաստատված հարցաթերթիկ և գործուղման մասին պրոֆկազմակերպության ընդունած վորոշման քաղվածքը։

Բոլոր ունկնդիրների գործուղման փաստաթղթերում անպայման պետք է ճիշտ ցույց տրվի, թե վոր ցիկլը (ըստ սեկտորների՝ ինչ տիպի աշխատանքի) և վոր մասնագիտության հաշվին են նրանք ուղարկվում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Լրացված հարցաթերթիկները պետք է հաստատված լինեն պրոֆկազմակերպության կողմից (չհաստատվածները քննության չեն առնվելու)։ Հարցաթերթիկի նմուշը կցված է,

## ՈՒՐ ՈՒՂԱՐԿԵԼ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Գործուղվող հեռակայիններին վերաբերյալ նյութերը պետք է ուղարկել (բացառությամբ ներքոհիշյալ շրջաններից) հետևյալ հասցեյով—Москва 11; Дворец Труда 2 под'езд комн. 98, заочному сектору Высшей школы профдвижения ВЦСПС.

Հետևյալ շրջանների հեռակայինները գործուղման փաստաթղթերն ուղարկում են անմիջապես հեռակա ուսուցման սեկտորի տեղական մասնաճյուղերին։

Մոսկվայի մարզում—Москва, 9, Абонементный ящик № 1243 (անձամբ հանձնողների համար Москва Охотный ряд п, 9, Заочный сектор)։

Ուկրայինայում—г. Харьков, Дворец Труда. ВШПД заочный сектор.

Ադրբեջանում—г. Баку, Дворец Труда, совпроф.—заочный сектор.

Վրաստանում—г. Тифлис, Совпроф Грузии, заочный сектор.

## ԻՆՉ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՏՐՎՈՒՄ ՀԵՌԱԿԱՅԻՆՆԵՐԻՆ

Պրոֆակտիվի հեռակա պատրաստման գործը հաջողությամբ առաջ տանելու համար ՀԱՄԿԽ-ը հետևյալ դիրեկտիվն է տվել պրոֆկազմակերպություններին—«ՀԱՄԿԽ-ը անհրաժեշտ է համա-



րում, վորպեսզի տեղական պրոֆկազմակերպություններն ավելի նորմալ պայմաններ ստեղծեն սեկտորի ակտիվ հեռակային—ունկնդիրների ուսման համար և հնգօրյակում մեկ ցերեկը նրանց ազատեն պրոֆբեռնավորումից»։

Իրավական տեսակետից հեռակա ուսուցման սիստեմը հավասարեցված է ուսումնական հիմնարկների ստացիոնար ցանցին։ Այսպիսով ՀԱՄԿԽ-ի պրոֆշարժման բարձրագույն դպրոցի հեռակա սեկտորի վորևե ցիկլն ավարտողները ստանում են նույն առավելությունները, ինչ ստացիոնար տիպի համապատասխան դպրոց կամ դասընթացներ ավարտողները։

ՀԱՄԿԽ-ի պրոֆշարժման բարձրագույն դպրոցի և միությունների ԿԿ-ների կենտրոնական դպրոցների նախապատրաստական ցիկլերի ունկնդիրները առանց քննության ընդունվում են այդ դպրոցները։ Մնացած ցիկլերն ավարտողները, համաձայն իրենց ձեռք բերած գիտելիքների և ստացած մարքս-լենինյան պատրաստության, հեռակա ուսուցման սեկտորի հանձնարարությամբ կարող են առաջ քաշվել համապատասխան պրոֆաշխատանքի։ Նրանց նաև նախապատվություն է տրվում ավելի բարձր դպրոց գործուղելիս (ՀԱՄԿԽ-ի քարտուղարությունը 1931 թ. 3/IX-ի իր վորոշումով առաջարկեց ապահովել հեռակա ցիկլերի ունկնդիրների առավելությունը ստացիոնար դպրոցները մտնողների այլ կարգի ունկնդիրների համեմատությամբ»)։

Վերջնական քննությունները տալուց հետո ունկնդիրները ստանում են համապատասխան վկայականներ։

## ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ

Պրոֆակտիվի հեռակա պատրաստման միջոցները բաց են թողնվում ՀամԿԽ-ի կենտրոնացված ֆոնդից։ Ունկնդիրները ազատվում են ուսման վարձից։

Ունկնդիրներին ուղարկվելիք ամեն տեսակ նյութերի (դասեր, նամակներ և այլն) փոստի ծախքերը վճարում է հեռակա ուսուցման սեկտորը։

Սեկտորի ունկնդիրներն իրենց նամակներն ուղարկելիս արտոնություններ են վայելում փոստանիշներ կպցնելով սովորական տարիֆի 50%-ի չափով (փոստային առաքումների կանոններն ուղարկվում են ունկնդիրներին առաջին իսկ հրահանգչական նամակի հետ միասին)։

## ՀԵՌԱԿԱ ՍԵԿՏՈՐԻ ՀԱՍՑԵՆ

Հեռակա սեկտորին ուղարկվելիք բոլոր նամակները, հարցումները, ուսումնական աշխատանքները և այլ գրագրությունները պետք է ուղարկել հետևյալ հասցեով. Москва, 11· Солянка, 12· Дворец Труда 2 под'езд, Высшая школа профдвижения ВЦСПС, комн. 98, заочному сектору.

Մոսկվայի, Ուկրայինայի, Ադրբեջանի և Վրաստանի գրագրությունները պետք է ուղարկել վերևում ցույց տված հասցեներով («Ուր ուղարկել (գործուղման փաստաթղթերը» բաժնում)։

---



В. Ц. С. П. С.

Высшая школа профдвижения

**ЗАОЧНЫЙ СЕКТОР**

Москва, 11, Солянка, 12, Дворец Труда, 2-й под'езд, комната 98. Телефон: Дворец Труда доб. 5-55 и 2-02.

№ ..........................

Не заполняй анкету, не ознакомившись с условиями обучения и приема на тот цикл, куда хочешь поступать.

Обязательно ответь на все вопросы. Заполняй анкету чернилами ясно и разборчиво.

Адрес необходимо писать подробно и разборчиво.

Заполнив анкету, заверь ее в командирующей организации.

Поступающие на циклы подготовки в ВШПД, подготовки в облпрофшколу, по отдельным теоретическим предметам и профпропагандистов, вместе с анкетой должны прислать характеристку: члены ВКП (б)—от партийной организации, беспартийные—от профсоюзной организации.

### АНКЕТА

**1.** На какой цикл поступает ..........................

**2.** Фамилия .................. имя .................. отчество ..................

**3.** Адрес заочника (подробный и точный) п/о ..................
область .................................. район ..................
улица .................................. № дома ........ № кв. ........

**4.** Какой организацией командирован (указать подробный адрес). ..................................



3252-53

5. № партбилета и стаж

6. № профбилета и стаж

7. Член какого союза (указать союз после разукрупнения)

8. Год рождения 9. пол

10. Национальность

11. Социальное положение (рабочий, служащий, с.-к. рабочий)

12. Занятие родителей: а) до Октябрьской революции б) в настоящее время

13. Где работает в настоящее время и должность (точное наименование предприятия или учреждения, в котором работает).

14. Производственный стаж

| | До Октябрьской революции | После Октябрьской революции |
|---|---|---|
| а) если рабочий, то сколько лет и в каком производстве работал . . . . . . | | |
| б) с. х. рабочий указывавет, когда, сколько лет, участвовал личным трудом в своем хозяйстве или в качестве наемного с. х. рабочего . . | | |
| В) служащие, кустари и другие указывают те учреждения и отрасли, где они работали и сколько. . . . . . . . | | |

15. Участие в соцсоревновании и ударничестве (указать подробно: организатор ударных бригад, состоит в ударной бригаде, есть изобретения, вносил предложения по рационализации и проч. Был ли премирован, чем и за что)



16. Какое получил образование общее и политическое

| В каких школах и учебных заведениях учился (перечислить их)? Окончил ли? | В каких партийных и профсоюзных школах или курсах обучался. Окончил ли? Если окончил, то в каком году? |
|---|---|
| | |

17. Какую выполнял пропагандистскую работу (указать стаж

18. Какую работу выполняете в порядке общественной нагрузки

19. Участие в профсоюзной работе:

а) какую работу вел в профсоюзе (указать подробно характер работы по найму и на выборных должностях, а также сколько времени)

б) какую вел руководящую профработу (указать подробно должность и сколько времени)

20. Участие в гражданской войне (когда, сколько лет и последние должности)

21. Был ли в белой армии

22. Выбывал ли из ВКП (б) и по какой причине

23. Подвергался ли партвзысканиям (указать подробно когда и за что)

24. Какую партработу вел в ВКП(б) или ВЛКСМ

25. Размер месячного заработка и число иждивенцев

26. Имеет ли радиоприемник, какой. Есть ли возможность коллективного слушания радиопередач

ՀՀ Ազգային գրադարան
NL0193099

27. Считает ли для себя необходимым получить общеобразовательную подготовку (русский язык, математика, география) ______________________

"_______" _______________ 193___ г.

ПОДПИСЬ СЛУШАТЕЛЯ:

| |
|---|
| Место печати командирующей организации |

Постановление профорганизации о направлении на учебу с указанием, на каком цикле рекомендуется учиться ______________________

______________________

ПОДПИСЬ КОМАНДИРУЮЩЕЙ ОРГАНИЗАЦИИ